75. ԺՈՐՈՒՆ ՊԻԺԸ ՄԻՆ ՏԸԵՂ ԻՆԻԼ ՉԻ

Մին արչ, մինգյել մին աղվըես հնգըրանում ըն, հղե յըն ինում, բիրաջի քյինամ մին հեռու տըեղ, տըեսնում հանդի մին ճորե յա ըրածում։ Մուտանում ըն, ճորուն պարյօր տամ, եռնան աղվըեսն ասում ա.—Ճո՛րե ախպըեր, էջ հնգըրանանք, էրկու չինինքյ, իրեք ինինքյ։ Ճորեն ասում ա.—Ես խուտակեր ըմ, տուք՝ մսակեր, հունց կըկա՞րենքյ հնգըեր տըեռնանք։ Աղվըեսն ասում ա.—Վըեչինչ, ճորե ախպըեր, մունք էլ խոտ կոտենքյ, կըսովըրցնըես...

Արջը նան աղվըեսը տըեսնում ըն, վըեր ճորեն պեն գյո̈նջ̈իղ ա, միշտ աչկեն տակավն ձ̈իրանց եչում ա, թա տըեսնա հինչ ըն անում։ Տահանք էլ օղում ըն ճորուն կլ̈խը վարեն, խափին, փըռնին վըեր քցին, ուտըեն։

Մին օր իրեքան հըվաքված վախտը արջն ասում ա.—Առաչ վըխճըրնեն առանց չոքան ին ըրածում, ես մաչկըս Ըսկյըրանին պըտերեն[1] տեմ ի անում, վըեր սուվըծանում ի, հենց իտի մաչկըս տեմ ըրած էլ մին վըեխճար ի ուտում, պըրանվում. ըտըեղ հա̈րա̈նի̈րի̈ծում տարե ապրալ ըմ։ Աղվըեսն ասում ա.—Արչ ախպըեր, տու ինձանն իծծուն տըռնավ մըեծ ըս, մըեր քչտին մին ծո̈ր կա, էտ ծո̈րո̈մը մին հավըու փիրմա կար, փիրմին յիրա̈ յէլ

[1] Խոսքը Ասկերանի բերդի մասին է (Ս. Բ.)։

պահակ չի կար, հավքերն ծիրանք-ծիրանք ծռէ վրին ածում, ծիրանք-ծիրանք ճուտըհանում, վըեր սովըծանում ի, մին հավ ի փռնում, ուտում. ըտըեղ հարծնը տարև ըպրեցի։ Արչն ասում ա.—Ճորև ախպըեր, տո՞ւ քանի տըրեկան ըս, մին պեբանըտ պեց ըրա, տըեսնամ։

Ճորեն ասում ա.—Ես վըեր իլնիլ ըմ[2], իմ հո̈ր նալնես տակեն իլված թիվըս կյիրնիլ ա, հու վըեր կո̈րթիլը գյո̈նդում ա, մուտանա, եչի տըեսնա։ Աղվըեսն ասում ա.—Իմ հո̈ր ինձ ըշկոլ չի տուվալ։ Արչն ասում ա.—Ես կո̈րթիլը գյո̈նդում ըմ։ Մուտանում ա, վըեր կարթի, ճորեն արչին հունց քացի յա տամ, արչը իրեք հետ մըրըլլախե յա տամ, տափըեն վըեր ինգյում։

Աղվըեսն արչին հալը վըեր տըեսնում ա, հո̈քյին ծալում ա, ղրաղ քաշվում, քյինում բիդի կոխկե սարըլ։ Ճորեն ասում ա.— Աղվըես ախպըեր, պա ինձ մենակ ըս թողում, թորը՞ քյինում։ Աղվըեսն ասում ա.—Էն սարեն կլխըեն իմ հո̈ր ա թաղած, քյինում ըմ կյիրեզմանն օրհնըեմ, վըեր ինձ կըրթըցրալ չի, թա չէ, ես էլ արչին օրը կինգյի։

---

[2] Ընկել եմ (Ն. Բ.)։